

**«ՀՀ ՓԱՍՏԱՔԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԸ՝ ՈՐՊԵՍ
ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄ**

Իրավաբանությունը գիտություն է իրավունքի մասին: Իրավունքը հասարակական հարաբերությունների կարգավորիչներից մեկն է, որն առաջացել է հասարակության շերտավորմանը զուգընթաց՝ դասակարգային հարաբերությունների ծագման ընթացքում՝ որպես տիրող դասակարգի՝ օրենքի աստիճանի բարձրացված կամքի դրսևորում, որը սկզբում արտահայտվել է սովորույթներում, հետագայում դարձել օրենք: Ցանկացած անձ, իր իրավունքներն իրացնելիս, պարտավոր է հետևել ՀՀ օրենսդրության, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ամրագրված պահանջներին՝ չխախտելով այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Տարբեր իրավահարաբերություններում ոտնահարվում են անձնաց իրավունքներն ու օրինական շահերը: Անձի մոտ առաջանում է անհրաժեշտություն՝ վերականգնելու իր խախտված իրավունքները կամ կանխելու ապագայում իր իրավունքների հնարավոր խախտումը: Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով:

ՀՀ-ում փաստաբանությունը սկիզբ է առել 1923թ. սեպտեմբերի 23-ին, երբ ՀՍՍՀ դատարանակազմության կանոնագրքով նախատեսվել է քրեական և քաղաքացիական գործերի պաշտպանների կոլեգիայի ստեղծում: Փաստաբան (լատիներեն *advocatus*, որը ծագել է *advoco* — հրավիրում եմ բառից) է այն անձը, որն ունի իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում և ստացել է համապատասխան արտոնագիր՝ փաստաբանական գործունեություն իրականացնելու համար:

Փաստաբանությունը հանդիսանում է իրավաբանության առանձնացված ճյուղ, իսկ փաստաբան է հանդիսանում փաստաբանական գործունեություն իրականացնելու համար համապատասխան արտոնագիր ստացած անձը: Որպես իրավաբանական կրթության բարեփոխում՝ ՀՀ փաստաբանների պալատի կողմից ստեղծվել է «ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամը, որը կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություն է և հետապնդում է գիտական, կրթական և այլ հանրօգուտ նպատակներ:

Մինչև ՀՀ փաստաբանների պալատի կողմից «ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամը ստեղծելը՝ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար բավական էր ունենալ իրավաբանական գործունեություն իրականացնելու վերաբերյալ 2 տարվա մասնագիտական ստաժ և հանձնել ՀՀ փաստաբանների պալատի կողմից կազմակերպված քննություն, որն իրականացվում էր թեստավորման միջոցով:

«ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամը, սկսած 2012 թվականից Հայաստանի լավագույն փաստաբանների, դատախազների, դատավորների, լրագրողների, հոգեբանների և այլ մասնագետների միջոցով անհրաժեշտ մասնագիտական հմտություններ է հաղորդում Փաստաբանական դպրոցի

ունկնդիրներին՝ պատրաստելով իրավաբանական և փաստաբանական օգնություն ցուցաբերելու համար լիարժեք պատրաստ փաստաբաններ:

Փաստաբանական դպրոցի կողմից կազմակերպված տեսական և պրակտիկ դասընթացների շնորհիվ ապագա փաստաբանը լիարժեք գիտակցում է հասարակության և պետության առջև ունեցած իր պատասխանատվությունը, մասնագիտական արժեքների պահպանման անհրաժեշտությունը, կոռուպցիոն դրսևորումներից զերծ մնալու անհրաժեշտությունը՝ պատրաստ լինելով իր ապագա վստահորդների խնդիրների հնարավորինս արդյունավետ լուծմանն ուղղված դժվարին գործընթացին:

«Փաստաբանների պալատի, ինչպես նաև «Փաստաբանական դպրոց» հիմնադրամի գերխնդիրը կայանում է բանիմաց, պիտանի, բարոյական, կիրթ, հմուտ փաստաբաններ կերտելու մեջ, իսկ առաքելությունը՝ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Այսպիսով, Փաստաբանական դպրոցը հանդիսանում է ոչ միայն փաստաբանների պալատի կարևորագույն ձեռքբերումներից մեկը, այլև Հայաստանի Հանրապետության, քանի որ «քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը հանդիսանում է իրավական պետության հիմնական երաշխիքներից մեկը:

Կարեն Տոնոյան

*«Փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ»*